ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «05» 12 2017թ. N՝ 1190-Ա

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. Խ. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ սանիտարահիգիենիկ փորձարկման լաբորատորիային նշանակել սույն հրամանի հավելվածում նշված ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին:

2. ՀՀ Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ սանիտարահիգիենիկ փորձարկման լաբորատորիային նշանակել 4 տարի ժամկետով՝ մինչև 2021 թվականի նոյեմբերի 9-ը:

3. ՀՀ Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ սանիտարահիգիենիկ փորձարկման լաբորատորիային տրամադրել Համապատասխանության գնահատման մարմնի նշանակման վկայական՝ Ն-08 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-08(Հ-08)2017:

4. ՀՀ Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ սանիտարահիգիենիկ փորձարկման լաբորատորիային գրանցել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Է. Տարասյանին:

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի 20 7թ.
---------- ի N —Ա հրամանի

# ՑԱՆԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

**ՀՀ տեխնիկական կանոնակարգեր**

1. ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի «Գարեջրի և դրա արտադրության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 44-Ն որոշում
2. ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի «Շշալցված խմելու ջրին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» թիվ 1240-Ն որոշում
3. ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի «Հանքային պարարտանյութերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1692-Ն որոշում
4. ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1546-Ն որոշում
5. ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի «Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 679-Ն որոշում
6. ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Խեցեգործական ամանեղենի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1750-Ն որոշում
7. ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1795-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի «3402» ծածկագիր (սինթետիկ լվացող և մաքրող միջոցներ)

**ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգեր**

1. «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
2. «Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 007/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
3. «Խաղալիքների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 008/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
4. «Օծանելիքի և կոսմետիկ արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 009/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
5. «Ցորենի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 015/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
6. «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
7. «Մրգերից և բանջարեղեններից արտադրված հյութերի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
8. «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 024/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
9. «Մասնագիտացված սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժական և դիետիկ պրոֆիլակտիկ սննդի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 027/2012) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
10. «Սննդային հավելումների, բուրավետիչների և օժանդակ տեխնոլոգիական միջոցների անվտանգության պահանջների մասին» (ՄՄ ՏԿ 029/2012) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
11. «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 033/2013) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
12. «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 034/2013) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
13. «Ձկան և ձկնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 040/2016) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ